

# Ճաշկերոյթ կուտայ սովիէթ

## ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐՈՒՆ

Երէկ, չորեքշաբթի իրիկուն, ժամը 6,30ին, Պաքուի ռատիօն, թրքերէն լեզուով տուաւ «Թաս» Գործակալութեան թղթակիցին մէկ լուրը Սան Ֆրանսիսքոյէն: Ահա ամփոփու՞մը լուրին. —

Սան Ֆրանսիսքոյի մէջ, Ամերիկահայ Ազգային Խորհուրդը ճաշկերոյթ մը սարքեց ի պատիւ Սովիէթ Միութեան պատուիրակներուն: Խորհուրդի անդամներէն Անդրէասեան (հաւանաբար խմբագրապետը Ֆրէդնոյի մամկ. Ազատական օրկան «Նոր Յր»ի), խօսեցաւ բաժակաճառ մը, և ընդգծեց, մասնաւորաբար որ Հայ ժողովուրդը, միայն սովիէթ իրաւակարգի տակ ապահովեց իր Ֆիզիքական և մշակութային ուժեղ դոյութիւնն ու վերելքը: Հայ ժողովուրդը, ըսաւ ան, դիտակից է թէ ինչո՞ւ կը կռուի անձնութրուութեամբ, Սովիէթ Միութեան միւս եզրայր ժողովուրդներուն կողքին: Ապա ան յայտնեց որ Սփիւռքի Հայութեան ալ առիթ պիտի տրուի համախմբուելու Սովիէթ Հայաստանի սահմաններէն ներս:

Պատասխանելով Պ. Անդրէասեանի, սովիէթ պատուիրակութեան պետ և Ուլաչինկիթընի սովիէթ դեւպան Պ. Կրոմիքօ ոգեկոչեց Հայ ժողովուրդի զաւակներուն հերոսական մասնակցութիւնը՝ Փաշլումի դէմ հայրենական պատերազմին, յիշեց, ի միջի այլոց, քաջագործութիւնները հայկական ՏԳՐԳ Թամանեան զօրաբաժնին, որ կռուելով յսոսչսչս: Սթալինկրատէն և Կովկասէն մինչև Գերմանիա, և մինչև Պերլին:

Եզրակացնելով, Պ. Կրոմիքօ յայտարարեց որ Հայ ժողովուրդը իր արժանաւոր տեղը գրաւած է արդէն՝ սովիէթ ժողովուրդներու մեծ ընտանիքին մէջ: